ԽՈՐԱՑՐԵՔ ՁԵՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

2017թ. հիմնադրվեց Հայաստանի Կայուն Զարգացման ազգային նորարարական կենտրոնը: Կենտրոնի ստեղծումը Հայաստանի Հանրապետության կառավարության և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի համատեղ նախաձեռնությունն էր:

Կենտրոնը Կառավարության, քաղաքացիական հասարակության, ակադեմիայի և մասնավոր հատվածի միջև կապող նորարարական հանգույց է: Օգտվելով նման բազմաշահառու համագործակցություններից՝ Կենտրոնի նպատակն է բացահայտել Հայաստանի Հանրապետության զարգացման ներուժի և Օրակարգ 2030-ի ազգայնացման գործընթացն իրականացման հնարավոր արագությունը: Ազգայնացման գործընթացն կառավարման բոլոր օղակներում առավել համապարփակ, համակողմանի և արդյունավետ իրագործելու նպատակով՝ առաջարկվում է սերտորեն համագործակցել Կենտրոնի հետ, օգտագործելել գործիքակազմը և նորարարական լուծումներ ներկայացնելու կարողությունները:

Իսկ ինչպե՞ս կարող է Կենտրոնն աջակցել ազգայնացման գործընթացին:

Կայուն Զարգացման նպատակների բնույթն ու փոխկապվածությունը պահանջում են նորովի մոտեցումներ, նոր մեթոդներ, տվյալների հզոր համակարգեր և ինստիտուտներ, որոնք ունակ են տրամադրել ոչ ստանդարտ լուծումներ ձևափոխման ազդեցության համար: Հայաստանի Կայուն Զարգացման ազգային նորարարական կենտրոնի գործունեության կենտրոնում այն նորարարական մեթոդներն են, որոնք փոխառված են մի շարք առաջատար ոլորտներից, ինչպես օրինակ՝ տվյալագիտություն, վարքաբանություն, մեծ տվյալների կառավարում, արհեստական բանականություն և այլն:

Կենտրոնի թիմը ակադեմիական հետազոտության և փաստերի օգնությամբ քաղաքականության մշակման գործընթացի մեջ ներմուծում է պատրաստի լուծումներ և իրականացնում քաղաքականություն մոդելավորում և փորձարկում: Կենտրոնը տվյալների, սոցիարցումների և այլ տեղեկատվության հավաքագրման և վերլուծման համար կիրառում է նորագույն տեխնոլոգիաներ: